Հաստատում եմ՝
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
ռեկտոր՝ Ա.Բ.Լոքյան

"13" 07 2020թ..

Կարծիք

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Գայանե Մարտինի Սոլախյանի «Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի 2020թ. հուլիսի 10-ի նիստում: Նիստին մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու,դոցենտ, ԱՄՆ Պրիստոնի համալսարանի շրջանավարտ Ռ. Էլամիրյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մամիկոն Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու Հ. Թադևոսյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Զաքարյանը, քաղ. գիտ. թեկնածու Հ. Մամիջանյանը, քաղ. գիտ. թեկնածու Գ. Սիմոնյանը, քաղ. գիտ. թեկնածու Մերի Մարգարյանը, ասիստենտ Լ. Նիկողոսյանը: Մասնակցում էին նաև ասպիրանտներ Մ. Աթիկյանը, Ա. Հարությունյանը, Գ. Ղուկասյանը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների կիրառման պայմաններում ցանցային ինտեգրացիոն գործընթացների ուսումնասիրմամբ և հետխորհրդային պետությունների բազմակողմանի համագործակցության անհրաժեշտության փաստարկմամբ: Այդ համատեքստում հիմնավորված է ինտեգրացիոն գործընթացների բազմամակարդակ ուսումնասիրման տեսական և կիրառական փոխկապակցվածությունը:

Հետազոտությունը արդիական է հետխորհրդային երկրների ինտեգրացիոն գործընթացների տեսամեթոդաբանական մոտեցումների զարգացման առումով՝ եվրասիականության քաղաքական և տնտեսական հիմքերի արդի մեկնաբանություններով:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հետխորհրդային պետությունների բազմավեկտոր համագործակցության նոր եզրեր և մեխանիզմներ մշակելու անհրաժեշտությամբ, ինչը թույլ կտա զարգացնել համագործակցության մշակույթը կրկնակի եռաչափության մեջ՝ անցյալ - ներկա – ապագա, ինչպես նաև տեղական, տարածաշրջանային և գլոբալ կառավարման տիրույթներում: Ավելին, հեղինակը համոզված է, որ իր այս մոտեցումը նորովի է դիտարկում հետխորհրդային երկների քաղաքական զարգացումները՝ հիմնավորելով նոր որակի բազմամակարդակ ինտեգրման անհրաժեշտությունը, քանի որ ԱՊՀ-ն հիմնականում կատարել է իր առաքելությունը:

Ներկայումս այդ բարդ և բազմամակարդակ ինտեգրման գործընթացներին բնորոշ խոչընդոտները և ապակայունացնող գործոնները ստեղծել են անորոշություններ Եվրասիականության արժեքաբանության նորովի ընկալման մակարդակում: Հետևաբար, ինտեգրման գործընթացների տեսամեթոդաբանական ուսումնասիրությունը ոչ միայն արդիական է, այլև թելադրված է ժամանակի մարտահրավերներով:

Եվ, վերջապես, աշխատանքի արդիականությունը պայմանավորում է Հայաստանի Հանրապետության զարգացման հեռանկարները՝ եվրասիական ինտեգրացիոն գործընթացների համատեքստում ուսումնասիրելու, անհրաժեշտ մեխանիզմներ մշակելու ձևաչափը:

Ատենախոսության նպատակները գիտական են, հիմնախնդիրները դիտարկված են բազմակողմանի: Ատենախոսը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրել է ինտեգրման գործընթացի արժեքային էվոլյուցիան, Եվրասիական գաղափարի վերափոխումը և նրա այժմեական կառուցվածքն ու գաղափարական – քաղաքական բաղադրիչները, հիմնավորել է հետխորհդային տարածքում

ինտեգրացիայի անհրաժեշտությունը, մասնավորապես ՀՀ-ի հեռանկարները այս համատեքստում:

Ատենախոսը տիրապետում և պահանջվող մակարդակով կիրառում է **հայեցակարգային – դիալեկտիկ մեթոդ՝** Եվրասիական գաղափարի հիմքը ճշգրտորեն ներկայացնելու համար: **Համեմատական վերլուծության մեթոդը** կիրառվել է Եվրասիական գաղափարի էվոլյուցիան և տրանսֆորմացիան ներկայացնելու համար: **Համեմատական – քաղաքական վերլուծությունը** թույլ է տվել հեղինակին գնահատել ինտեգացիոն գործընթացների դինամիկան՝ ժամանակակից մարտահրավերների համատեքստում: **Մոդելավորման մեթոդի** օգնությամբ հեղինակը արդյունավետ սինթեզել է առկա մոդելները և մշակել առավել օպտիմալ բանաձև ինտեգրվող երկրների համար:

Հեղինակի կողմից ձեռք բերված հիմնական գիտական արդյունքները միտված են ոչ միայն Եվրասիական գաղափարի տեսության էվոլյուցիայի ուսումնասիրմանը, այլ նաև արդի ինտեգրացիոն գործընթացների համատեքստում նրա ռազմավարական կիրառելիության և ապագայի նկատմամբ հուսալիության հնարավորությունների վերլուծությանը:

Ատենախոսության մեջ վերլուծվում են ոչ միայն ԱՊՀ շրջանակներում ինտեգրման գործընթացների տեսությունն ու պրակտիկան, այլ նաև բացահայտվում են ինտեգրացիոն գործընթացներում առկա հիմնախնդիրները, առաջարկվում են դրանց հաղթահարման հնարավոր եղանակները, բացահայտվում են ինտեգրման հիմնական մոդելները, ինչպես նաև կարևորվում է տարածաշրջանային ինտեգրման համեմատական վերլուծությունը: Միաժամանակ բացահայտվել են ՀՀ-ի արտաքին քաղաքականության կառուցվածքում համագործակցության մշակույթի զարգացման ուղենիշները ինչպես նաև հիմնավորվել են ՀՀ հեռանկարները միջազգային և, մասնավորապես, Եվրասիական ինտեգրացիոն գործընթացներին:

Այս արդյունքների նորույթը ոչ միայն հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն գործընթացների և Հայաստանի Հանրապետության հեռանկարների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, այլև Եվրասիականության գաղափարի

էվոլյուցիայի կարևորման տիրույթների փաստարկումն է, ինչը հեղինակի համոզմամբ թույլ է տալիս համակարգային մոտեցում ցուցաբերել եվրասիական ինտեգրացիոն գործընթացներին և ապագայում դրա հետագա զարգացման հեռանկարներին:

Ատենախոսության մեջ ուսումնասիրվում է Եվրասիական գաղափարական և քաղաքական հայեցակարգի էությունը, հիմնական արմատները, էվոլյուցիայի ընթացքում կերպափոխման առանձնահատկությունները:

Աշխատանքի գործնական արժեքը Եվրասիականության գաղափարի քաղաքական դոկտրինի համակողմանի և ցանցային ուսումնասիրությունն է, ինչպես նաև նրա զարգացման արդի մեխանիզմները գնահատելու և ՀՀ-ի համար նորերը մշակելու հետագա հեռանկարները:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները կարող են ներառվել քաղաքական գլոբալացման և գլոկալացման, միջազգային հարաբերությունների, աշխարհաքաղաքականության, գաղափարական և քաղաքական դոկտրինների ուսումնասիրման, ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացների իրականացման և արդիականացման ժամանակ:

Ատենախոսությունը համակարգված և ամբողջական գիտական ուսումնասիրություն է, որը հեղինակը կատարել է ինքնուրույն և բարձր մակարդակով:

Աշխատանքը պարունակում է առաջարկված խնդիրների համապարփակ լուծում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք, օգտագործվել են Եվրասիական գաղափարի հիմնադիր-ստեղծող հեղինակների մի շարք մենագրություններ և հոդվածներ, ինտեգրացիան գործընթացներն ուսումնասիրող մի շարք հեղինակների աշխատություններ, արտաքին քաղաքականության վերլուծության համար անհրաժեշտ գիտակավերլուծական նյութեր, պետական պաշտոնական այլ կառույցների կողմից ընդունված/հրապարակված փաստաթղթեր:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից /վեց ենթագլուխներից/, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Հեղինակի առաջարկած հավելվածն ամբողջական պատկերացում է տալիս

Եվրասիական գաղափարական և քաղաքական դոկտրինի հիմնական փուլերի և էվոլյուցիայի ընթացքում դրա վերափոխման մասին:

Հեղինակի կողմից կատարված եզրակացությունները տրամաբանորեն և գիտականորեն հիմնավորված են:

Ատենախոսության եզրահանգումները գիտական են և օգտակար Հայաստանում քաղաքական գիտությունների հետագա զարգացման համար: Ուսումնասիրության արդյունքում կատարվել են ոչ միայն հայեցակարգային բնույթի եզրահանգումներ և հետևություններ, այլև մշակվել են մի շարք պրակտիկ առաջարկություններ առկա մոդելների դրական կողմերը սինթեզելու, և ինտեգրացիոն գործընթացերը խոչընդոտող մի շարք գործոնների չեզոքացման ուղղությամբ: Ուսումնասիրության արդյունքում ստացած եզրահանգումները, հետևություններն ու ընդհանրացումները ունեն ինչպես տեսական, այնպես էլ կիրառական մեծ արժեք:

Ատենախոսության հիմքում դրված է հետևյալ գիտական կանխավարկածը. **Ինտեգրացիոն գործընթացները այսօր ոչ միայն արդիական են, այլ նաև անհրաժեշտ, իսկ ՀՀ-ի համար, ժամանակակից մարտահրավերների համատեքստում, Եվրասիական ինտգրացիոն գործընթացները անվտանգության ապահովման հեռանկարային գործոն են**: Այս հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակը կարողացել է գիտական խնդիր առաջադրել, ինչը որ թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող առաջնային պահանջներից է:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, տարբեր գիտաժողովներում, սեմինարներում, ինչպես նաև սեղմագրում:

Գ. Սոլախյանի ատենախոսությունն ունի նաև որոշակի թերություններ.

1. Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը՝ պայմանավորված COVID-19 -ով, ուսումնասիրեր կենսաքաղաքականության գոյաբանական հիմնախնդիրները՝ որպես ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման արժեքաբանություն:

Այդ համատեքստում կարելի էր նոր զարգացումներ կանխատեսել և մոդելներ մշակել ՀՀ – ՌԴ ռազմական - դաշնակցային համագործակցության ոլորտում:

2. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը՝ հիմնվելով Ս. Հանթինգտոնի և Ժ. Նայի տեսական մոտեցումների վրա, ուսումնասիրեր ինտեգրացիոն գործընթացների քաղաքակրթական առանձնահատկությունները: Դա հնարավորություն կտար հեղինակին կարևորել ինտեգրացիան, որպես գիտավերլուծական կառավարման գերակա պարադիգմա:

3. Նկատի ունենալով թեմայի զարգացման հրամայականները, ցանկալի կլիներ շեշտադրել ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիոն և հատվածային բնույթը պայմանավորող գործոնները՝ ժողովրավարական անցման և անցումից-համախմբում հետխորհրդային երկրներում: Այս մոտեցումը անհրաժեշտ էր, քանի որ հեղինակը միայն այդպես կարող էր ինտեգրացիան և, հատկապես, Եվրասիականության գաղափարը դիտարկել որպես քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման միջոց հետխորհրդային երկրներում: Դա հնարավորություն կտար համեմատել ինտեգրման գործընթացը տեղական (ազգային), տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում՝ մշակելով ինտեգրացիոն գործընթացների այլընտրանքային խաղային սցենարներ:

4. Շատ հպանցիկ է ուսումնասիրված Չինաստանի գործոնը, այն դեպքում, երբ Չինաստանը բավականին արագ տեմպերով է զարգանում՝ դառնալով ինտեգրացիոն նոր բևեռ, իր արժեքաբանությամբ և քաղաքակրթական չափումներով նոր հնարավորություն է զարգացող երկրների համար:

5. Աշխատության մեջ առկա են որոշակի տեխնիկական բացթողումներ և թերություններ:

Նշված թերությունները չեն նվազեցնում աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

ՀՀ կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ

Գայանե Մարտինի Սոլախյանի "Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների էվոլյուցիան հետխորհրդային տարածությունում" թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ԻԳ.00.01 – "Քաղաքական գիտության տեսություն" մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորում է հրապարակային պաշտպանության:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի 2020թ. հուլիսի 10-ի նիստում:

ՀՀ կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյան

Քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ _____/Ս. Պողոսյան

"_____" _____ 2020թ.